

ՆԱՐԻՆԵ ԿԱՐԱԽԱՆՅԱԼ

ՇՊՀ հայցորդ

ՊԵՐՃ ՉԵՅԹՈՒՆՑՅԱՆԻ «ՎԵՐՋԻՆ ԱՐԵՎԱԳԱԼԸ» ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊԸ*

Պերճ Չեյթունցյանն արդեն ճանաչված հեղինակ էր, երբ գրեց իր «Վերջին արևագալը» կենսագրական վեպը՝ Նվիրված եղեռնազոհ գրող Գրիգոր Չոիրապին: Այն լույս տեսավ «Վարք մեծաց» մատենաշարով, որն ինքնին մատնացույց էր անում Նաև վեպի ենթաժանրը՝ կենսագրավեպ: Ըստ իր ենթաժանրային տեսակի «Վերջին արևագալը» մեր պատկերացմամբ կենսագրական վեպ է, որն ունի գեղարվեստական ու զաղափարական, կառուցվածքային հարուստ ենթաշերտեր: Այս տեսակետից իրավացի է Ս. Արզումանյանը, որ «Վերջին արևագալը» պատմակենսագրական, քաղաքական վեպի և վեպ-ժամանակագրության բաղադրիչներով ստեղծված «չափազանց բարդ, միանգամայն ինքնատիպ և գեղարվեստական առումով բարձրարժեք ստեղծագործություն է»¹ համարում: Ասվածին կարելի է ավելացնել, որ այն ունի Նաև փիլիսոփայական վեպի տարրեր, ուստի «Վերջին արևագալը» վեպին բնորոշ է համադրականությունը, ինչը համարում ենք Նրա գլխավոր արժանիքներից մեկը: Այսպես՝ «Վերջին արևագալը» (1990) ազդարարում է հայ կենսագրավեպի արդի փուլի սկզբնավորումը: Կարելի է ասել, որ այն արժեքավոր ձեռքբերում հանդիսացավ այս ժանրատեսակի հետագա զարգացման համար՝ ստեղծելով ամուր և հեռուն տանող Նախադրյալներ:

Կենսագրական վեպի ժանրի մեջ Չեյթունցյանը ինքնատիպ կերպով է հանդես եկել դեռևս «Կլոդ Ռոբերտ Իզերլի» (1968) և «Ամենատխուր մարդը» (1981) վեպերը ստեղծելու շնորհիվ: Այսպես 20-րդ դարի ողբերգությունների արձարծումը հայտնվում է Չեյթունցյանի ստեղծագործությունների կիզակետում, իսկ հայ ժողովրդի ողբերգությունը մեծաթույններից էր, ուստի բնական էր հեղինակի անդրադարձը 1915 թ. Մեծ եղեռնի թեմային: Մինչ այդ հեղինակը եղեռնի

* Հոդվածն ընդունված է տպագրության 20.03.2020 թ.:

1 Արզումանյան Ս. Հ., Արդի հայ վեպը, հ. 5, էջ 335:

թեմայով գրել էր երկու դրամա՝ «Ուտքի, դատարանն է գալիս» (1979 թ.) (սվիրված հայազգի վրիժառու Սողոմոն Թեհերյանի դատավարությանը) և «Մեծ լուսություն» (սվիրված եղեռնագոհ գրողներ Դանիել Վարուժանի և Ռուբեն Սևակի կյանքի վերջին օրերին (1982 թ.)):

Հայոց ցեղասպանության նախապատրաստման, եղեռնի թեման արծարծելու համար Պերո Չեյթունցյանն ընտրել է արևմտահայ նշանավոր գործչի՝ Գրիգոր Չոհրապի կյանքը¹, որի կերպարը իր ողջ կենսագործունեությամբ բնութագրում է նրա ապրած ժամանակաշրջանը: Հեղինակը Չոհրապի կերպարում փորձում է լուծել իր առջև դրված կարևոր հարցերից մեկը՝ հերոսի կյանքի միջոցով ներկայացնել այն բարդ ու հակասական ժամանակը, ուր հզոր և մեծ անհատը ջանքեր չի խնայում սանձելու իր ժողովրդի գլխին կախված մեծագույն չարիքը, սակայն նրա պայքարը դառնում է սոսկ հողմադաշների դեմ կռիվ: «Ես ուզում եմ իմ կյանքի բոլոր ստվերների ու լուսավոր կետերի գնահատականը.... Իմ անձի միջոցով՝ նաև ժամանակի»², - ասում է վեպի գլխավոր հերոսը՝ ինքնին արտահայտելով նաև հեղինակի նպատակադրույթը: Չեյթունցյանը արևմտահայ նշանավոր գրողի ու հասարակական-քաղաքական գործչի ճակատագիրը մեկնաբանում է իր ժողովրդի ճակատագրով և պատմաքաղաքական հանգամանքների միջամտությամբ:

Վեպի գործողությունները զարգանում են ոչ թե ֆաբուլայի, այլ սյուժեի տրամաբանությամբ: Առաջին էջերից երևում է հասուն, ձևավորված հայացքների տեր և ճանաչում ունեցող արևմտահայ նշանավոր մտավորականը: Վեպի գլխավոր հերոսը կոչված է կրել լեռը բարձրացողի ճակատագիրը: Այդ պատճառով է Չոհրապը մերժում իր տաղանդի երկրպագու Մարտեն Հակոբյանի՝ գրողին մեծ գումարով փրկելու առաջարկը: Առաջին էջերից հեղինակն ընթերցողին հաղորդակից է դարձնում արևմտահայության ճակատագրով մտահոգ, նրան ինչ-որ կերպ իր կարգավիճակից ելնելով օգնել ցանկացող, միևնույն վերջ ժողովրդի բախտը կիսող մեծ գրողի, գործչի, հայրենասեր մարդու ներաշխարհին: Այդ նպատակին հեղինակը հասնում է հայտնի փաստերի գեղարվեստական վերացարկման և հոգեվերլուծության միջոցով:

1 Հայ գրականության մեջ առաջին անգամ Չոհրապի գեղարվեստական կերպարին անդրադարձել է եղեռնից հրաշքով փրկված երվանդ Օտյանը իր «Մեր երեսփոխանները: Ազգային ժողով» գրքում և «Թիւ 17 խաֆիէն» վեպում:

2 Պերո Չեյթունցյան, «Վերջին արևագալը», Ե., «Արևիկ», էջ 414: Վեպից բերված մեջբերումները կտրվեն կողքին՝ փակագծերի մեջ:

Վեպը գրված է հակադրության սկզբունքով. հեղինակը մեկ ցույց է տալիս սուլթան Համիդին, մեկ՝ երիտթուրքերին, հետադարձ հայացքով մեկ ներկայացնում է 1980-ական թթ. ձևավորված արևմտահայ մշակութային, քաղաքական կյանքը, թե իՆչ արժեքներ է ստեղծել հայ ժողովուրդը, իՆչ քաղաքական հայացքներ ունեին նրա մտավորականները, ազգային իՆչ խմորումներ էին ձևավորվում և ինչպես էին դրանք ճնշվում: Այս առումով մեծ դերակատարություն ունեն «Հետադարձ հայացք» վերնագրված գլուխները, որոնք ինքնատիպ գեղարվեստական լուծում են հեղինակի կողմից: Դրանք թույլ են տալիս, որ հեղինակը իմաստասիրական խորհրդածություններ անի, երբեմն էլ հանդես գա հրապարակագրական ուղղակի մեկնաբանություններով:

Մտքի ու գործողությունների մակընթացությունների և տեղատվությունների նման հաջորդականությունը, արագությունն ու հանդարտ ընթացքը ապահովում են վեպի ռիթմը: Ընդհատվող ժամանակն ու տարածաժամանակային կտրուկ անցումները ինքնատիպ գեղարվեստական հնարքներ են: Քրոնոտոպը վեպում վարպետորեն է կիրառված: Այսպես՝ լարված իրադարձություններին հաջորդում է խաղաղ կյանքը, երբ արևմտահայ մտավորականությունը զբաղված էր ստեղծագործական աշխատանքով:

Հիշողությունների շղթան գնում է դեպի անցյալի երջանիկ օրերը՝ «ուփսումականների» շարժումը, «Արևելք»-ի տպագրությունը, երբ Չոհրապը մուտք էր գործում գրականություն և հասարակական-քաղաքական կյանք: Ներկայացվում է մանկությունը **գոյաբանական վախերով**՝ դպրոցական ֆալսիֆայով ու զավագանով: Մեռնում է հայրը՝ ակնեցի խաչիկ աղան. **առաջին մահը** կյանքում: Առաջին սերը՝ Զաթինա անունով հույն աղջիկը, մշտապես ներկա է նրա հոգեաշխարհում և հանում նրա հետազայում պաշտպանում է «Օրոգդիբաք» հաստատության աշխատողների դատը: Այսպես Չոհրապը դառնում է ոչ միայն իր ազգակիցների, այլև օտարականների իրավունքների պաշտպան:

Գրողը հոգեբանորեն համոզիչ է ներկայացնում Չոհրապի կերպարի զարգացումը: Գրիգորիկի «մեջ կամաց-կամաց Գրիգոր դառնալու գիտակցությունն է ծնվում» և ձգտում էր «փնքն իրենից առաջ անցնել» (28, 29): Երբ «Մասիս»-ի խմբագիր Կարապետ Ուփուջյանը մերժում է նրա բանաստեղծությունները տպագրել, որոշում է անպայման բանաստեղծ դառնալ: Չոհրապի՝ որպես հասարակական

գործչի ծնունդը 1878-ին էր, երբ կատաղի հողված էր գրել Մինաս Չերազի «Թե ինչ շահեցանք Բեռլինի վեհաժողովեն» գրքույկի դեմ մերժելով «լացի լեզուն»: Ու Չոհրապը ստիպված է ամբողջ կյանքում կռվել «միս-մենակ». «Հոգ չէ, թե Դոն Զիշոտ ըլլամ, թող ջրաղացականներուն դեմ կռվիմ...» (220):

Չոհրապը սիրում է կյանքը և չի հրաժարվում նաև իր վրա դրված պարտականություններից. «Լավ բան է ապրելը: Մանավանդ, երբ ուժերից վեր ծանրություն ունես ուսերիդ: Եվ պարտվելու ոչ մի իրավունք» (374): Հերոսի գիտակցական հոսքում ապրելու երջանկության բաղձանք կա. պայծառատեսի աչքերով նա տեսնում է իր զավակներին արդեն ամուսնացած. հարսներ կուներևա, փեսաներ, իսկ ինքը չի լինի. «Խանդեց, ոչ նրա համար, որ կենդանի կլինեն, հազար անգամ ոչ, այլ որովհետև ինքը չի լինի» (441): Գոյության փոխություններից մեկը Չեյթունցյանի վեպում Չոհրապի կերպարի մեկնաբանման ելակետ է: Մահվան և անորոշի վախը սաստկանում է օր օրի, և հերոսը պայքարում է իր ազգի համար ամեն օր: Առաջին աշխարհամարտը սկսվելուց հետո նա փորձում է գործել հանում իր ժողովրդի, թեկուզև այդ ջանքերը հաճախ ցանկալի արդյունք չէին տալիս և ամեն ինչ արդեն որոշված էր: Նրա առջև ծառացած ամենամեծ պարտականությունը դառնում է ոչ թե ապրելու պարտականությունը, այլ պատասխանատվությունն իր ազգի առջև: Չոհրապը չի մտածում իր անձը փրկելու մասին, նրան շարունակ մտահոգում է ժողովրդի կացությունն ու ճակատագիրը:

«Վերջին արևագալը» վեպում հերոսների հոգեվիճակներում և փոխհարաբերություններում գերակայում է դրամատիզմը: Հերոսի մենախոսությունը հաճախ միջոց է հանդիսանում հեղինակի խոհերի արտահայտման համար և դառնում է հեղինակի արտաքին մենախոսություն: «Գոյանում էր մի մեծ մենախոսություն, Գրիգոր Չոհրապի մենախոսությունը» (165), - պարզապես գրում է հեղինակը: Այս առումով ուշագրավ է Չոհրապին հետապնդող զանգակը: Լեզու առած զանգի հետ բանավեճը Չոհրապի **խղճի մենախոսությունն** է, ինքնադատաստանը ու խոստովանանքը: Չոհրապը ինքը իրեն չի կարողացել ներել, երբ պահանջել է եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի հրաժարականը, որպեսզի Ադանայի եղեռնից հետո կառավարությունը լուծեր մի քանի կենսական հարցեր. հակառակ դեպքում ոճիրի մեղքը կբարդվեր հայերի վրա: Հատկանշական է նաև այն, որ Չոհրապի խղճի մենախոսությանը ներկա են մոր ու երկու հայ-

րերի ստվերները: Սկիզբը և վերջը մոտենում են, Նրանց Ներկայությունը հիշեցնում է մոտալուտ վախճանը: «Մայրը... հիացմունքով Նայում էր որդուն, Ավետիս Յորդամյանի դեմքը ոչինչ չէր արտահայտում, որովհետև ինչ կարծիք էլ ունենար, թեր կամ դեմ, վախճանում էր սխալ կմեկնաբանվի, չէ՞ որ խորթ հայր էր», իսկ խաչիկ աղայի «աչքերում դարձյալ իր որդու արտացոլումը չկար» (422): Ավետիս Յորդամյանը խորթ հայր էր և Չոհրապի համար Նախասկիզբ չէր կարող լինել, իսկ հարազատ հոր՝ խաչիկ աղայի ժառանգորդական կապը, որքան էլ ցավալի էր, ընդհատվել էր վաղաժամ մահով. արտացոլանքի բացակայությունը որդու աչքերում այդ է նշանակում: Բնական է Չոհրապի զգացմունքների, տրամադրությունների դեպի Ներս ուղղվածությունը և մոր արքետիպի հաղթանակը:

Անձի ինքնահաղթահարումը, կատարելագործման ճանապարհը բախվում է **ընտրության** հարցին, իսկ թուրքական միջավայրում «ընտրություն կա վատի ու էլ ավելի վատի միջև...» (350-351): Հեղինակը գեղարվեստորեն ակնառու է դարձնում այն իրողությունը, որ Սուլթան Համիդի և երիտթուրքերի քաղաքականությունը վերլուծելով, հակադրելով և Նույնացնելով Նրանց գործունեությունը, ցույց է տալիս, որ թուրքի «երիտասարդն» ու «զառամյալը» Նույնն են: Սուլթան Համիդի հաջորդը՝ թուրքի «երիտասարդը» Թալեաթ փաշան, իրականում ոչ թե Նրա թշնամին է, այլ հոգեզավակը, սովորեց իր Նախորդից դիվանագիտության մի տեսակ՝ «խոսակցին հիմարի տեղ դնել: ... Դրանով շփոթեցնել ու դրանով հաղթել» (314): Այդպես է վարվում Թալեաթը Չոհրապի, Չավեն պատրիարքի և Նախկին պատրիարք Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի Ներկայությամբ: Վերջինիս հրամանով էին աքսորվել ամենախելացի հայերը, բայց ասում է, որ աքսորել է կուսակցականներին, իսկ Չոհրապը ողջ-առողջ Նստած է իր առջև: Եվ Նրանց ճանապարհներիս ասում է, թե հեշտ չէ երկիր կառավարելը: Նույն «խոստովանությունը» անում է ամերիկյան դեսպան Մորգենթաուի Ներկայությամբ և չի զլանում Նրան դիմել ինդրանքով, որ ամերիկյան ապահովագրական ընկերություններում իրենց կյանքը և գույքը ապահովագրած բոլոր հայերի փողերը ստանա թուրքական կառավարությունը՝ որպես օրինական ժառանգորդ, քանի որ Նրանք արդեն մեռած են:

Թալեաթն անկեղծ չէ անգամ «միայնության մեջ, երբ **ինքն էր և իր ստվերը** պատի վրա» (65): Նա երևում է իր վախերի հետ՝ անգիտակցականի ոլորտում (անգլիական և ֆրանսիական ռազմա-

Նավերը փակել էին Դարդանեղը, որ սարսափ էր առաջացրել մահ-մեղականների և առաջին հերթին երտթուրքերի պարագլուխների մեջ), Նա քնում է շորերով և կոշիկներով, և երբ կինը քնած ժամանակ հանում է կոշիկները, բոբիկ կանգնելով իրեն չափազանց անպաշտպան է զգում և սպառնում կնոջը թողնել Պոլսում (66): Թալեաթը վախկոտ է, Նեևգ ու անհավատարիմ: Իսկ 1915 թ. ապրիլի 25-ի առավոտյան՝ հայ մտավորականներին ձերբակալելուց հետո, Թալեաթի՝ Վազենհայսի հետ «մտերմիկ» զրույցում պարզվում է, որ Նա գիշերը կարողացել էր հանգիստ քնել, որովհետև ա՛յս անգամ քնաբերն ազդել էր: Թուրք իշխանավորի գազանային եռությունը հեղինակն ինքնատիպ է բացահայտում:

«Վերջին արևագալ»-ի կարևորագույն հարցադրումներից է Նաև մարդու մենակության հարցը: Վեպի հերոսները մենակ են, անպաշտպան իրենց բաժին հասած դառնությունների առջև, որովհետև Արևմտյան Հայաստանը Թուրքիայի տիրապետության տակ էր: Գում-Գափուի ցույցերի կազմակերպիչ Արփիար Արփիարյանը, Լևոն Բաշայանը և Չավեն պատրիարքը ճաշակում են առաջնորդի և ամբոխի հակադրության, ինչպես Նաև հայի և թուրքի հակադրություն դառնությունը.: Սակայն առաջնորդողներին տրված է լցնելու այդ դատարկությունը, և Արփիարը, որ հազիվ էր ազատություն ստացել, դառնում է մեկ ուրիշ՝ Բաբը-Ալիի ցույցերի կազմակերպիչ (այն կոչված էր եվրոպական դեսպաններին հիշեցնելու մայիսյան ծրագրերի մասին և Բարձր Դռնից պահանջելու դրանց իրագործումը): Ու Նորից է ծնվում ճակատագրին դիմակայելու մարդու անզորության հարցը, մանավանդ այդ ճակատագիրը թուրքական իրականությունն էր և եվրոպական պետությունների դեսպանատները: Արփիար Արփիարյանը ինքնատիպ հայ մտավորականի հաջողված կերպար է: Նա ճանաչում է թուրքական իրականության ամբողջ դաժանությունը:

Չեյթունցյանն արձարծում է հայի և թուրքի հոգեբանության և բարոյական սկզբունքների տարբերությունը, խորհրդածում արժանապատիվ ապրելու և կյանքի պահպանման հավերժական հարցերի մասին: Թուրք պետական գործիչներն ապերախտ են ու կեղծ, ինչպես Թալեաթը, Ջեմալը, Խալիլ բեկը: Իսկ Չոհրապը Խալիլ բեկի առջև «մեղավոր» էր մեկ բանով. Նրա կյանքը փրկած մարդն իրավունք չունեի կենդանի մնալու:

Վեպում հայագի գրական կերպարները, ի տարբերություն թուրքերի, ունեն բարոյական արժեքներ և հոգեբանական արգելա-

պատնեշներ: Վեպում երբեմն հրապարակագրական կրքով գրված տողերի ենք հանդիպում, որին ծուլվում է հեգնանքը: «Բարոյակա-
նություն չէր, հապա ի՞նչ էր, որ Վանի հերոսական ինքնապաշտպա-
նության երջանիկ ավարտից հետո, երբ ռուսական զորքերը մտան
քաղաք և հայերը ազատ շունչ քաշեցին, հայ զինվորները թուրք
կանանց, տղաներին և աղջիկներին առաջնորդում էին ամերիկյան
դպրոցի շենքը և ասում. «Մի՛ լաք, ձեզի համար վտանգ չկան, մեր
գործը Ջնդեթի հետ է» <...>. Նա էր պայտեր մեխում իր հայ զոհերի
ոտնաթաթերին» (276):

Չոհրապի կերպարը զարգանում է հակադրության միջոցով:
Թալեաթի և նրա հակադրությունը հայ և թուրք պետական գործիչ-
ների մտածողության և արարքների տարբերություն է: Թալեաթը
ամուր և խղճի խայթ չունի անգամ մենակ ժամանակ, իսկ Չոհրապի
ամաչում և կարմրում է ինքն իր առջև: Համաշխարհային ճանաչ-
ման հասած Գրիգոր Չոհրապի կերպարի ողբերգականությունը ոչ
թե նրանում է, որ անգոր է պայքարելու, այլ անգոր է պատմական
դաժան իրականությանը դիմակայելու:

Էնվերի և Թալեաթի հարաբերությունները և նրանց նկատմամբ
իր վերաբերմունքն արտահայտել է նրանց արտաքինի նկարագ-
րությամբ: «Հակակրանքն ու Նախանձը ամուր, անքակտելի կապ
էին ստեղծել նրանց միջև, անբաժան դարձրել միմյանցից» (119):
Ըստ Չեյթունյանի՝ Թալեաթ փաշան «հսկա զանգված» է, Ջեմալ
փաշան «կարակուլե գլխարկ» է (486, 598) կամ «կարակուլե սրի-
կա» (616):

Թշնամուն ծաղրելով, փոքրացնելով գրական կերպար ստեղ-
ծելն այնքան էլ ճիշտ չէ. սա հեղինակի վերաբերմունքն է: Միևնույն
այդ մարդիկ (Թալեաթ, Էնվեր, Ջեմալ և այլք, որոնք հայ ժողովրդի
դեմ նյութեցին այդ ոճիրը) իրենց պետության առջև դրված ծրագրի
իրականացնողներն էին: Այս առումով հետաքրքրական է Հրանտ
Մաթևոսյանի դիրքորոշումը, որը վերապահ մոտեցում ունի եղեռնի
թեմայով գրելու կապակցությամբ. «Դժվար է 1915-ի մասին չխոսե-
լու, բայց դժվար է գեղարվեստով խոսելը»¹:

Գրիգոր Չոհրապի և արևմտահայ եղեռնագործ գրողների՝ Վարու-
ժանի, Սիամանթոյի, Ռուբեն Սևակի կենսագրվագների միջոցով Չեյ-
թունյանը ներկայացնում է հայ ազգային, հասարակական-քաղա-
քական իրավիճակների համայնապատկերը, որտեղ փորձության են
ենթարկվում և հայտնաբերվում են մարդկային կյանքի արժեքները:

1 Մաթևոսյան Հ., Սպիտակ թղթի առջև, Ե., «Հայագիտակ», 2004, էջ 33:

Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Ռուբեն Սևակի կերպարներին Չեյթունցյանն անդրադառնում է հիմնականում մեկ օրվա մեջ՝ ապրիլի 24-ին՝ ձերբակալության օրը, ինչպես նաև քսոսի մեջ և պատկերում է նրանց մարդկային ու բանաստեղծին բնորոշ բարձր պահվածքը:

Ահա Վարուժանը. անբնական ուրախ, որովհետև փորձում էր ինքն իրենից և ուրիշներից թաքցնել սեփական վախը մահվան հանդեպ: Անցյալի հուշերն ու ներկան միախառնվել են իրար, և իրականությունն ասես կորցրել է սահմանը: Հիշում է իրենց սիրո հաղթանակի օրերը, երբ Արաքսիի հայրն ու մայրը դեմ էին, որ իրենց աղջիկն ամուսնանա բրզնիկցի վարժապետի հետ, որ ամեն օր էլ ուժ էր դպրոց գնում: Իսկ հիմա՞... հիմա պիտի հրաժեշտ տա իր մանուկներին և գնա թուրք ոստիկանների ուղեկցությամբ... «Մանուկ հիսուսները կմսին այս զարհուրելի ծմբան մեջ» (191),- եզրակացնում է հեղինակը Դանիել Վարուժանի մտքերի հղումով:

Ահա Սիամանթոն՝ հիշողությունների շղթայով, իր գիտակցական հոսքով, ուր երևում է նրա բանաստեղծական կյանքը՝ մահին խաբելու, ճակատագրին հեգնելու ձգտումով, նվիրական սերերով (Սաթենիկ, Մանիկ Պերպերյան), Եվրոպայում անցկացրած տառապալի օրերով (մի ազարակատիրոջ մոտ անվարձ աշխատանք, մահվան դեմ հարատև կռիվ)...

Ռուբեն Սևակը 1915 թ. ապրիլի 24-ին հերթական դասախոսությունն էր կարդում: Թվում է, թե կյանքը բնական ընթացքի մեջ է: Այսպես են ներկայացվում հայ գրողները՝ իրենց ստեղծագործական կերտվածքով և աշխարհով և «Մեծ զուլում»-ին դիմադրելու անզորությամբ:

Վեպում հայ ժողովրդի շահերի նվիրյալի տիպական կերպար է նաև Չոհրապի ընկեր և ճակատագիրը կիսող Վարդգեսի կերպարը: Հերոսի ինքնաճանաչումը հանգեցնում է նաև սեփական անձի արժևորմանը և գնահատմանը. «Տասնիկը տարեկան էր, երբ իր ծննդավայրի՝ Կարևո ցույցերին մասնակցած պատանին ճանաչեց իրեն ու հասկացավ, որ այսուհետև իր տեղը ոչ թե շարքի մեջ է, այլ շարքի գլխին» (455): Չոհրապը և Վարդգեսը իրենց պատասխանատու են զգում քսոսականների առջև և եթե չեն կարող նրանց օգնել, միակ արդարացումը համարում են այն, որ երբ նրանք իմանան հայ պատգամավորների ձերբակալությունն ու մահը, դրանով քաված կլինեն իրենց մեղքը:

«Վերջին արևագալը» ինքնատիպ կենսագրական վեպ է, որի մեջ համադրվել են բազում գաղափարագեղարվեստական շերտեր: Այն ներկայացնում է բավականին մեծ ժամանակահատված՝ 19-րդ դարի վերջին քառորդից մինչև Մեծ եղեռնը: Այստեղ արևմտահայ մեր մշակութային նշանավոր գործիչներն են, ներկայացված է հայ մշակութային կյանքը և հայ ժողովրդի ստեղծագործ ուժը: Հարադրվագային կերպարները լրացնում են միջավայրը: Ցավոք, միջավայրի լայն կոլորիտը շատ դեպքերում հանգամանորեն չի տրվում:

Չեյթոնցյանի վեպում կարևորվել է Նաև հայոց պատմության, թուրքական և համաշխարհային քաղաքականության վերլուծությունը, գրողը թափանցում է պատմության խորքը, վերլուծում տարածաշրջանի պատմական ընթացքը, փորձում մեկնաբանել աշխարհաքաղաքական զարգացումները:

Կենսագրական վեպում Չոհրապին իբրև «Նորավեպի իշխան» հանգամանորեն չներկայացնելու պատճառը կարելի է թերություն համարել, եթե սոսկ միակողմանի մոտեցում հանդես բերենք: Այս տեսակետից վեպը ճիշտ է ընկալել Ելենա Ալեքսանյանը. «Չեյթոնցյանի վեպում հրաշալի է ներկայացնում ստեղծագործելու նկատմամբ գրողի կարոտաբաղձությունը»¹: Հեղինակի ներքին մղումներից ու գերիսնդիրներից մեկն է եղել ցույց տալ, որ մեծ գրողը իր ժողովրդի համար ստեղծված օրհասական պահերին առավելապես հանդես է գալիս որպես հասարակական գործիչ, իսկ Օսմանյան կայսրության պես պետության մեջ արևմտահայության վերահաս կործանումը կասեցնելու համար մեջլիսի պատգամավոր Չոհրապը՝ իր տարակուսանքներով, մտահոգություններով, անելանելի վիճակում է գտնվում: Վերջինս այդ պատվին ու դիրքին արժանացել էր ժողովրդի ու մտավորականության կողմից ճանաչված ու սիրված մտավորական լինելու շնորհիվ:

Հեղինակն, իհարկե, ոչ բոլոր հերոսներին է կարողացել հոգեբանորեն լիարժեք դարձնել: Վեպի հյուսվածքում համեմատաբար մակերեսորեն են պատկերված Վարուժանի, Ռուբեն Սևակի և Սիամանթոյի կերպարները: Նա փորձում է ցույց տալ հայ մշակութային կյանքն իր ամբողջությամբ, նրանց ներկայությունը առանձին «կադրերի» միջոցով արդարացված է, սակայն թույլ է միահյուսված Չոհրապի կերպարի հետ: Գուցե դա էր պատճառը, որ հետագայում նրանց կերպարներին անդրադարձ կատարեցին Հայկազ Հակոբ-

1 Ելենա Ալեքսանյան, Լուսաբացը չի կարող վերջինը լինել, Հայաստան, փետրվարի 27, 1991:

ջանյանն իր եղեռնագրի հիշյալ գրողներին նվիրված կենսագրական եռերգության մեջ¹ և Ալեքսանդր Թոփչյանը Ռուբեն Սևակին նվիրված կենսագրական վեպում²:

«Վերջին արևագալը» վեպում գլխավոր հերոսի և Նրա գաղափարակից ընկերների, հայ մյուս մտավորականների ու գրողների (Վարդգես, Սիամանթո, Վարուժան, Ռուբեն Սևակ) պահվածքն այս շրջանում պետք է գնահատել գործնականորեն. ժողովրդի ուժերը համախմբել չկարողանալու պայմաններում գեթ Նրա ճակատագիրը կիսելու, Նրա կողքին լինելու բացառիկ կամքի դրսևորում: Չէ՞ որ Նրանցից յուրաքանչյուրը գիտեր, թե երիտթուրքերի իշխանավորների կողմից իրենց ինչ հեռանկար էր սպասվում, բացի այդ Նրանցից յուրաքանչյուրը նաև նախապես Կ.Պոլսից ու պետության սահմաններից հեռանալու հնարավորություն ուներ, սակայն, այնուամենայնիվ, չհեռացավ: Նրանցից յուրաքանչյուրը մտածում էր թերևս Չոփրապի պես. «_Ո՞րու ձգեմ այս դժբախտ ժողովուրդը... Այս անտեր ու անգլուխ ժողովուրդը... Պարտքս է մինչև վերջ պատնեշին վրա կենալ...» (15): Այսպիսի մտածողությունն ու բարոյական պահվածքն էր, որ գլխավոր հերոսին դարձնում է անցյալից Ներկային բերող ու փոխանցող մարդկային, հասարակական, ազգային-քաղաքական արժեքների հավաքական մարմնացում հանդիսացող մարդկային բնավորություն: Չոփրապը հայ ժողովրդի այն նվիրական զավակներից մեկն է, որի ընդօրինակման արժանի կերպարն է ստեղծել Պ. Չեյթունցյանը Նրա մասին գրված բարձրարժեք կենսագրական վեպում:

Հարուստ է նաև վեպի բանարվեստը, որի կարևոր բաղադրիչներից են իրերի և առարկաների հեղինակային մեկնաբանությունները: Առարկաների//արտաքին աշխարհի պատկերումը ճանապարհ է դեպի ենթագիտակցական աշխարհ և ընկալվում է մարդկանց Ներքին աշխարհի բացահայտման միջոց: Հերոսների հոգեվիճակը տարբեր իրադրություններում Չեյթունցյանը ցույց է տալիս երկրորդական թվացող մանրամասների նկարագրությամբ, բայց լուսանկարչի սրատեսությամբ և ճշգրտությամբ:

Հայելու//արտացոլանքի գործառույթը էական դեր ունի վեպի բանարվեստի Նշանագիտական համակարգում: Չոփրապի և

1 Տես **Հակոբջանյան Հ. Ա.**, «Առկայծ ճրագ. Դանիել Վարուժան»: Գյումրի: «Դպիր» հրատարակչություն: 2004: «Ով մարդկային արդարություն. Սիամանթո»: Երևան: ՀԳՄ հրատարակչություն: 2005: «Սպիտակ եղելվեյսներ. Ռ. Սևակ»: Երևան: «Նաիրի» հրատարակչություն: 1997:

2 Թոփչյան Ա., Եվ անգամ մահից հետո, Ե., ՀԳՄ, 2005:

Վարդգեսի «վերջին կանգառի»՝ վերջին պահերին հայելու «հանգեցրեց» ասես հնչում է որպես հրաժեշտի և մահվան տխուր նոտա՝ կրկնվող և վերջնականապես մարող. «Առջևի նեղ հայելու մեջ երևում էին միայն Ֆիքրի Սամի բեյի աչքերը: Մի ակնթաթը՝ Նայեց, ապա փախցրեց հայացքը...» (616): Հայելին՝ ինքնահայեցման, ինքնաքննության գործառույթով, չի խաբում. Չոհրապի և Վարդգեսի մահը որոշված էր թուրքական բարձրագույն ատյանների կողմից:

Իշխանության ու դիրքի խորհրդանիշ **աթուռը** // **գահույքը** տարբեր պարագաներում հերոսները տարբեր կերպ են քնկալում (49, 423): Չոհրապի բանտարկվելուց հետո, երբ Նրա կինը՝ Կլարան, հեռանում էր Թալեաթի մոտից, աթուռը անորոշ հույս է ներշնչում. «...Բայց երկու սառը աչքեր գամվեցին Նրան» (608): Այսուհետ բոլոր հայերին հետապնդելու են թուրքերի աչքերը:

Հզոր պետության ներկայացուցչի՝ Գերմանիայի դեսպան Վազենիայմի **ձեռքերը** կանացիորեն նուրբ են և ճերմակ. Նա է Թալեաթի հետ մշակել հայերի «տեղահանության» ծրագիրը, բայց հանգիստ կարող է հարցնել, թե ինչ մեղք են գործել հայերը թուրքերի հանդեպ: Վերջինիս երկար և ջերմ ձեռքսեղմումը Վանգենիայմին «գլխի է գցում», որ «իր **ձեռքերը** կանացիորեն նուրբ են ու աններելիորեն ճերմակ» (217):

Հայությունից հեռացած և Ադանա ուղարկված խորհրդարանական քննիչ մարմնի անդամ Հակոբ Պապիկյանը Չոհրապից փորձում է թաքցնել իր **ձեռքերը**: Նրան տանջում է մեղավորության զգացումը. «Ես ալ իթթիհաթական եմ... Եվ ուրեմն իմ ձեռքերս ալ հայու արյունով ներկված են... Իմ ազգիս արյունով...» (365): Հակոբ Պապիկյանը սպանվում է Սան Ստեֆանոյի իր բնակարանում. բոլորի կողմից չսիրված անձը մահանում է որպես հերոս: Ազգային գիտակցության արթնացման համար վերջինս վճարում է կյանքով, որով հետև «կենդանի մնալու իրավունք չունեի» (375): Հակոբ Պապիկյանի հավաքած փաստերի և Գրիգոր Չոհրապի ջանքերի շնորհիվ կատարվեց զարմանալի, անսովորը. «Թուրքը, որ սովոր էր սպանելու և անպատիժ մնալու, անկեղծորեն զարմացավ, որ փոխանակ հայը կախաղան հանվելու կամ բանտարկվելու, ինքն է պատիժ կրում» (379): Այդ անարդար երկրում Չոհրապյան ամեն օր պայքարում է հաճախ արդարության, հանուն իր ազգակիցների իրավունքների:

Երիտթուրքերի իշխանության պատճառով առաջացած անհեթեթ իրականության դրսևորում է Չոհրապի և Վարդգեսի «վերջին

ընթիվը»։ Ընթրիքի սեղանի նկարագրությունը հիշեցնում է Դեր Չո-րի անապատը. «Ափսեների մեջ ոսկորներ էին կուտակված, սփռոցի վրա տեղ-տեղ կարմիր գինի էր թափվել, ամեն ինչ ավերված էր ու թալանված։ Իսկ հայերին հրավիրել էին որպես ավելի նուրբ, ավելի ազնվական ուտեստեղեն» (632)։ Թափված կարմիր գինին նախապատրաստվող սպանության խորհրդանիշն է։ Կարմիրն ու արյունը նույնանում են նաև վեպի վերջին մասում գրողի մահվան պահին. «Թվում էր, թե մարդասպանի կարմիր տաբատի կարմիր թավիշից մի կտոր պոկվել ու ընկել էր իր մարմնին» (652)։

Վեպը ոչ միայն Չոհրապի կենսապատումն է, այլև հայի և թուրքի էության բացահայտումը, նրանց հակադրությունը ցույց տալու միջոց։ «Թուրքը հայից փոխառել է հերկ, գութան, շեն բառը... Նաև առաստաղ բառը... Շեն ու առաստաղ» (167), այսինքն՝ տուն, կայուն բնակատեղի, խաղաղ կյանքի և աշխատանքի երաշխիք։ **Առաստաղը** վեպի գեղագիտական համակարգում դառնում է անորոշության ու տագնապի նշան (324, 398, 452, 463, 472, 638)։

Երիտթուրքերի նոր կառավարության մեջ անկախ պատգամավոր Չոհրապը տեղ ունի. «Գիտցիր, որ ամուսինդ ո՛չ աջակողմը պիտի նստի, ո՛չ ալ ձախակողմը... Այլ **առաստաղը...**» (324)։ Պատասխանատվությունը և ազգի հանդեպ պարտականությունները նրա մեջ ծնում են անորոշի հանդեպ երկյուղ։ Վեպի վերջում առաստաղը «ազատության նեղ բացվածք» (640) է, ապրելու գալթակողություն, որովհետև Մկրտիչ Յոթնեղբայրյանը և մի քանի հայ երտասարդներ, տեսնելով, որ անկարող են համոզել, որ երկու հայ մեպուսները փախչեն, առաստաղի վրա անցք են բացում, որպեսզի կոտրեն նրանց համառությունը և կարողանան փախցնել։

«Վերջին արևազայլը» կենսագրական վեպի ենթաժանրի հետաքրքրական դրսևորում է։ Փիլիսոփայական վեպի տարրերը, որ նշմարվում էին նրանում, հետագայում գեղեցիկ կերպով դրսևորվեցին Ալեքսանդր Թոփչյանի «Եվ անգամ մահից հետո» (Ռուբեն Սևակի մասին) կենսագրական վեպում։ «Վերջին արևազայլը» գաղափարագեղարվեստական արժեքների հարստությամբ հիրավի արդի կենսագրական վեպի ստեղծման գործընթացին յուրովի խթանող դերակատարություն ունեցավ։

Նարինե Հ. Կարախանյան – ԾՊՀ-ի հայցորդ, գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ նորագույն շրջանի հայ գրականություն։ Գրում է ատենախոսություն, որի թեման է «Արդի հայ կենսագրական վեպը».

1990-2015 թթ.»: Թեմայի ուղղությամբ տպագրվել է վեց գիտական հոդված (1. «Նահապետ Զուլալի կենսապատումը» (Կանթեղ: Գիտական հոդվածներ, Ե., 2017, 2 (71), էջ 17-25), 2. «Վահան Տերյանի կերպարը կենսագրական վեպերում» (ՇՊՀ Գիտական տեղեկագիր, № 1, պրակ Բ, Հումանիտար և հասարակական գիտություններ, դասավանդման մեթոդիկաներ, Գյումրի, 2017, էջ 21-32), 3. «Կենսագրական վեպի տեսության և պատմության հարցեր: Արդի հայ կենսագրական վեպի մերօրյա արտահայտությունը», էջ 223-233: // «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում», V միջազգային գիտաժողով, Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական համալսարան, Ե., «Միսմա ՍՊԸ», 2018, 4. «Սարգիս Վահագնի «Արշիլ Կորքի» կենսագրական վեպը» («Հայագիտական հանդես», № 4 (38), Ե., 2017, էջ 91-98), 5. «Աշոտ Աղաբաբյանի կենսագրական վեպերը («Ռեգիոնալ», «Մենակը»)» («Հայագիտական հանդես», № 3(41), էջ 59-70, Ե., 2018), 6. «Ռուբեն Սևակի վիպական կերպարը» («Հայագիտական հանդես», 2 (44), Ե, 2019, էջ 125-139)):

Н. А. КАРАХАНЫЯН - БИОГРАФИЧЕСКИЙ РОМАН ПЕРЧА ЗЕЙТУНЦЯНА «ПОСЛЕДНИЙ РАССВЕТ: -Биографический роман Перча Зейтунцяна «Последний рассвет» рассматриваем методами семантики и психоаналитической герменевтики. Роман интересен тем, что открывает эру современной армянской биографии, и многие из обсуждаемых в нем художественных и идеологических принципов имеют традицию. Автор интерпретирует художественный образ «Властелина новеллы» Григора Зограба, который был очевидцем трагической судьбы армянина: ужасного геноцида 1915 г.- посредством художественного ремейка известных фактов.

Ключевые слова: Григор Зограб, художественный образ, писатели-жертвы геноцида, художественная абстракция фактов, поток сознания, семиотика, отчуждение, монолог совести, биографический роман.

N. H. KARAKHANYAN - THE LAST SUNRISE" BIOGRAPHICAL NOVEL BY PERTCH ZEYTUNTSYAN: "The Last Sunrise" biographical novel by Perch Zeytuntsyan is being studied by the methods of semiotics and psychoanalytic hermeneutics. The interesting point of the novel is that it opens the period of modern Armenian biographical novel and a lot of ideological fiction principles covered in it have had the value of tradition. The author through

artistic introduction of the real facts interprets the fictional character of Grigor Zohrap, "the Novel Prince", who had the tragic fate of the Armenian nation and suffered from the Great genocide in 1915.

Key words: Grigor Zohrap, a fictional character, writers who were victims of the genocide, artistic introduction of facts, a stream of consciousness, semiosis, alienation, a monologue of conscience, a biographical novel.

REFERENCES

1. Arzumanyan S. H., Ardi hay vepy, h. 5, Ye., HGM hrat., 2004 t. **(In Armenian):**
2. Zejtuntsyan Pertch, Verdzin arevagaly, Ye., 1991 t., «Aryevik» **(In Armenian):**
3. Topchyan A. E., «Yev angam mahits heto», Yerevan, HGM hratarakchutyun, 2005 **(In Armenian):**
4. **Hakobjanyan H. A.**, «Arkaytz tchrag, Daniel Varuzhan», «Dpir» hratarakchutyun, 2004, nuyni` «Ov mardkayin ardarutyun. Siamanto», Yerevan, HGM hratarakchutyun, 2005, nuyni` «Spitak Edelveysner. R. Sevak», Yerevan, «Nairi» hratarakchutyun, 1997 **(In Armenian):**
5. Matevosyan H., Spitak tghti ardzev, Ye., «Hayagitak», 2004 **(In Armenian):**
6. Aleksanyan Yelena, Lusabatsy chi karogh verjiny linel, Hayastan, petrvari 27, 1991 **(In Armenian):**